Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար գովազդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«15» «Հուլիս» 2019թ. ժամը 18:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Լ. Բաբախանյան, Մ.Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ.Մխիթարյան)

Ընդունել ի գիտություն, որ 27.06.19թ. հրապարակվել է հրավեր armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2019 թվականի հուլիսի 4-ի, ժամը 15:00-ին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Անտարես» ՍՊԸ	*tatev@antares.am*	02519531
2	«ԱփՍոլուշնզ» ՍՊԸ	*upsolutions.am@gmail.com*	00105214
3	«Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ	*info@outdooreffect.am*	02515612
4	«Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ	*universalinvest88@mail.ru*	05542503

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Մ.Մխիթարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

28.06.2019թ. ներկայացվել է հրավերի վերաբերյալ հարցադրում:

29.06.2019թ. հարցմանը պատասխանվել է և հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը /կցվում է/ հրապարակվել armeps համակարգում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Բանակցությունների վարման մասին

(Մ. Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի I-ին մասի 7.6 կետի պահանջները (գնման ընթացակարգը իրականացվել է ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքերով) մասնակիցները հրավիրվել են բանակցությունների՝ բոլոր չափաբաժնների մասով (ոչ ավտոմատ ծանուցում՝ armeps համակարգի միջոցով): Բանակցությունների օրը՝ 2019 թվականի հուլիսի 12-ին ժամը 15:00-ին իրենց մասնակցությունն են ապահովել բոլոր մասնակից կազմակերպությունների տնօրենները: Բանակցության ընթացքում «Անտարես» ՍՊԸ-ի տնօրենը առաջարկել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով բանակցությունները հետաձգել ևս մեկ աշխատանքային օրով, քանի որ տեխնիկական բնութագիրը քննարկելու արդյունքում վերջինս հայտարարեց, որ կարող է ներկայացնել նոր գնային առաջարկ՝ վերահաշվարկ անելուց հետո, որի համար անհրաժեշտ է ժամանակ: Վերջինիս առաջարկի վերաբերյալ մյուս երկու կազմակերպությունների՝ «Աութդոր Էֆեկտ» և «ԱփՍոլուշնզ» ՍՊԸ-ի տնօրենները առարկություններ չներկայացրեցին և որոշում կայացվեց նիստը հետաձգել մինչև 2019 թվականի հուլիսի 15-ի ժամը 17:00-Ն: Ինչպես նաև «Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ-ի տնօրենը հայտարարեց, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նոր գնային առաջարկ չի ներկայացնելու: Բանակցությունների հաջորդ օրը՝ 2019 թվականի հուլիսի 15-ին ժամը 17:00-ին իրենց մասնակցությունն են ապահովել «Անտարես» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված Տաթևիկ Դավթյանը (կցվում է) և «ԱփՍոլուշնզ» ՍՊԸ-ի տնօրենը: 1-ին չափաբաժնի մասով «Անտարես» ՍՊԸ-ի ներկայացուվիչը ներկայացրեց նոր գնային առաջարկը, իսկ

«ԱփՍոլուշնզ» ՍՊԸ-ի գնային առաջարկը մնաց անփոփոխ: 2-րդ չափաբաժնի մասով քննարկմանը ներկա երկու կազմակերպություններն էլ ներկայացրեցին նոր գնային առաջարկները: Բանակցությունների վերջում հեռախոսազանգի միջոցով վերջին անգամ հարցում ներկայացվեց «Աութդոր Էֆեկտ» ՍՊԸ-ի տնօրենին և վերջինս նորից հաստատեց, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նոր գնային առաջարկներ չի ներկայացնելու:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Մ.Մխիթարյան)

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները մինչ բանակցությունները և բանակցություններից հետո ներկայացվում են կից աղյուսակով (excel տարբերակով).

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել՝

- «ԱփՍոլուշնզ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով
- «Անտարես» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով
- «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ն 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ «Անտարես», «ԱփՍոլուշնզ» և «Ունիվերսալ Ինվեստ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/12» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում ՀՀ ՊԵԿ հարցման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Լ.Բաբախանյան

---------- Մ.Մնացականյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

ՀՀ ԱՆ ԳՀՇՁԲ-2019/12 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ/հայտերի բացման ժամանակ-մինչև բանակցությունները և 15.07.2019թ. բանակցություններից հետո

Հ/Հ	CPV	Անվանում	Անտարես ՍՊԸ				ԱփՍոլուշնզ ՍՊԸ				Աութդոր Էֆեկտ ՍՊԸ		Ունիվերսալ Ինվեստ ՍՊԸ	
			Հայտերի բացում/ մինչև բանակցությունները		15.07.2019թ. Բանակցություններից հետո		Հայտերի բացում/ մինչև բանակցությունները		15.07.2019թ. Բանակցություններից հետո					
			Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով	Արժեք առանց ԱԱՀ	Ընդհանուր գին ԱԱՀ-ով
1	79341100/501	Գովազդային ծառայություն / Արտաքին գովազդային վահանակների պատրաստում (միջին չափսի)	6,426,000	7,711,200	3,889,000	4,666,800	**918,000.00**	918,000	918,000	918,000	4,000,000.00	4,800,000		
2	79341100/502	Գովազդային ծառայություն /Արտաքին գովազդային վահանակների պատրաստում (մեծ չափսի)	15,555,400	18,666,480	13,400,000	**16,080,000.00**	**14,728,800.00**	14,728,800	13,450,000	13,450,000	20,000,000.00	24,000,000		
3	79341100/503	Գովազդային ծառայություն / Միջմարզային երթուղի իրականացնող ավտոբուսների թափքերի գովազդային ձևավորում	9,720,000	11,664,000			8,428,000.00	8,428,000					**6,700,000.00**	6,700,000
4	79341100/504	Գովազդային ծառայություն / Երևան քաղաքի ներքաղաքային երթուղի իրականացնող ավտոբուսների թափքերի գովազդային ձևավորում	14,300,000	17,160,000			13,340,000.00	13,340,000					**10,300,000.00**	10,300,000
Ընդամենը						**16,080,000.00**				**918,000.00**				**17,000,000.00**

5/5

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Սույնով "Անտարես" ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր մարմնի ղեկավար Արմեն Մարտիրոսյանի լիազորում է քաղաքացի Տաթևիկ Դավթյանին (անձնագիր AM0423613 տրված 19.08.2011-ին 001-ի կողմից, բնակվող՝ ք. Դիլիջան, 26 Կոմիսարների 20) որպես ընկերության ներկայացուցիչ հանդես գալու << Առողջապահության նախարարությունում բանակցություններ վարելու համար:

Լիազորագիրը տրվում է մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 31-ը:

Լիազորող՝
"Անտարես" ՍՊԸ
գործադիր մարմնի ղեկավար՝ /Արմեն Մարտիրոսյան

ք. Երևան 15.07.19 թ.

«ԱՆՏԱՐԵՍ» ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պող. 50 ա/1: հեռ.՝ (+374 10) 58 10 59, 56 15 26, հեռ./ֆաքս՝(+374 10) 58 76 69
antares@antares.am, www.antares.am